ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ **ք.Եղեգնաձոր**

N 41 **10 մայիսի 2017թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 37, 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 40 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ <<ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, 1.13-րդ կետի <<զ>> և <<է>>, 1.15-րդ կետի <<ժ>> , 1.17-րդ կետի <<բ>> և <<գ>> և 1.20-րդ կետի <<բ>> և <<դ>> ենթակետերի, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-237-Ն օրենքի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի ապրիլի 21-ի թիվ 01/18.2/2455-17 հանձնարարականի պահանջները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2017 թվականի ապրիլի 25-ի N 37 և 2017 թվականի մայիսի 4-ի N40 որոշումները:

2.<<Մաքուր Հայաստան>> ծրագրի իրականացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մազում ստեղծել մազային հանձնաժողով՝ համաձայն սույն որոշման հավելվածի :

3. .<<Մաքուր Հայաստան>> ծրագրի իրականացման նպատակով ստեղծված ՀՀ Վայոց ձորի մարզային հանձնաժողովին՝

ա) մարզի համայնքների ղեկավարների հետ որոշակիացնել այն աղբավայրերը, որոնք համայնքների տարածքում այսուհետ պետք է սպասարկվեն,

բ) մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցված աշխատանքներ իրականացնել ֆիզիկական և իրավաբանական անձանց համար աղբահանության դրույքաչափերի սահմանման, վերջիններիս մեջ աղբավայրերի շահագործման ծախսերի ներառման ուղղությամբ,

գ) հետևողական միջոցներ ձեռնարկել արձանագրված աղբավայրերը փակելու կամ մաքրելու վերաբերյալ ծրագիր ներկայացնելու ուղղությամբ,

դ) միջոցներ ձեռնարկել յուրաքանչյուր փակված կամ տեղափոխված աղբավայրի մասին տեղեկատվությունը Google Earth-ի հենքի վրա ստեղծված հարթակում տեղադրելու համար,

ե) վերոհիշյալ հարցերի կապակցությամբ մեկշաբաթյա պարբերականությամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետին ներկայացնել տեղեկատվություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2017 թվականի մայիսի 10-ի
Թիվ 41 որոշման

.<<Մաքուր Հայաստան>> ծրագրի իրականացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մազում ստեղծված մարզային հանձնաժողով

1.**Ս.Թարվերդյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ – հանձնաժողովի նախագահ,

2.**Ա.Հովսեփյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ – հանձնաժողովի նախագահի տեղակալ,

3.**Ն.Սիմոնյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ – հանձնաժողովի անդամ,

4.**Մ.Ներսիսյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ – հանձնաժողովի անդամ ,

5.**Ս.Աղաջանյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ - հանձնաժողովի անդամ,

6.**Ն.Սարոյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ – հանձնաժողովի անդամ ,

7. **Խ.Գևորգյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ - հանձնաժողովի անդամ ,

8. **Օ.Բարսեղյան**՝ ՀՀ առողջապահության նախարարության <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մասնաճյուղի տնօրեն - հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

9. **Վ.Գրիգորյան**՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի պետ - հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ):

10. **Վ.Հովհաննիսյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի ղեկավար- հանձնաժողովի անդամ,

11. **Ս.Բաբայան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափի համայնքի ղեկավար- հանձնաժողովի անդամ,

12. **Թ.Ավետյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքի ղեկավար-հանձնաժողովի անդամ,

13. **Մ.Մովսիսյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի համայնքի ղեկավար-հանձնաժողովի անդամ,

14. **Դ.Հարությունյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքի ղեկավար-հանձնաժողովի անդամ,

15. **Ռ.Խաչատրյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքի ղեկավար-հանձնաժողովի անդամ,

16. **Տ.Խուդոյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի համայնքի ղեկավար-հանձնաժողովի անդամ,

17.**Ա.Ղազարյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ – հանձնաժողովի անդամ,

18.**Ա.Հովհաննիսյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ – հանձնաժողովի անդամ,

19.**Խ.Ասլանյան**՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ – հանձնաժողովի անդամ:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ